



**ԴԱՏԱԽԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԴԵՐԸ ԵՒ ԿԱԶՄԸ**

Դատախազության համակարգում դատախազների պաշտոնի նշանակումը կատարվում է գլխավոր դատախազի կողմից, ինչի գործընթացում կարևոր դերակատարում ունի նաև որակավորման հանձնաժողովը:

Որակավորման հանձնաժողովի գործունեության եւ կազմավորման կարգավորումները նախատեսված են «Դատախազության մասին» ՀՀ օրենքով:

Մասնավորապես, օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազին առընթեր գործում է էթիկայի եւ որակավորման հանձնաժողովներ:

Վկայակոչված հոդվածով սահմանվում է նաև որակավորման հանձնաժողովի կազմը:

Մասնավորապես, *Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործառույթներ (այսուհետ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ) իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ տասնմեկ անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում արդարադատության ակադեմիայի ռեկտորը, գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և երեք իրավաբան-գիտնական, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Փորձագետները պետք է ունենան ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների քննության առնվազն երեք տարվա փորձառություն:*

Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:

Օրենքով սահմանված է նաև, որ հանձնաժողովների գործունեության, ինչպես նաև դատախազանդամների ընտրության կարգը սահմանում է գլխավոր դատախազը:

Վերը ներկայացված համալիր կարգավորումների ներկայացումը ցույց է տալիս, որ ինչպես գլխավոր դատախազի նշանակման, այնպես էլ վերջինիս կողմից դատախազների նշանակման գործում արտաքին անկախ փորձագիտական մասնակցություն գոյություն չունի<sup>1</sup>:

Դատախազների նշանակման գործընթացում թեպետև նախատեսված է որակավորման հանձնաժողովը, սակայն վերջինս առավելապես կազմված է դատախազներից: Ընդ որում, ինչպես վերջիններս, այնպես էլ նախատեսված իրավաբան-գիտնականները նշանակվում են գլխավոր դատախազի կողմից: Այսինքն, չնայած հանձնաժողովի առկայությանը, բոլոր

<sup>1</sup> <https://prwb.am/wp-content/uploads/2022/05/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A6%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%B8%D6%82%D5%B4%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%B8%D5%B6%D5%AB-%D5%B6%D5%B7%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A8.pdf>



որոշումների կայացման մեջ հիմնական դերակատարումը վերապահված է գլխավոր դատախազին և բոլոր որոշումները կայացվում են նրա կողմից<sup>2</sup>:

Օրենքով կամ այլ իրավական ակտով սահմանված չեն նաեւ սկզբունքները կամ չափանիշները, որոնց հիման վրա տեղի է ունենում հանձնաժողովի դատախազ անդամների եւ իրավաբան-գիտնականների ընտրությունը, ինչը նշանակում է, որ որակավորման հանձնաժողովի ձևավորման եւ անդամների ընտրության ու նշանակման գործում էական դերակատարումը տրված է գլխավոր դատախազին: Նման կազավորումներն ու ձևավորման ընթացակարգը ըստ էության ազդում է հանձնաժողովի անկախության եւ գործունեության վրա:

Հատկանշական է, որ ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնական էջում հասանելի դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին 26.04.2021թ-ի հրամանով նախատեսված է հանձնաժողովի կազմը, անդամության ստանձնման ժամկետը, հրամանի կատարման վերահսկողությունը՝ գլխավոր դատախազի կողմից<sup>3</sup>: Այլ տեղեկություն, թե ինչ չափանիշների հիման վրա եւ ինչ սկզբունքով են իրավաբան-գիտնականները ներգրավվել, գոյություն չունի, ինչը փաստում է, որ կազմի ձևավորումը թողնված է գլխավոր դատախազի հայեցողությանը:

Այսինքն, դատախազության համակարգում պաշտոնի նշանակման գործընթացում հիմնական դերակատարումը տրված է գլխավոր դատախազին, ով մի կողմից պատասխանատու է նշանակումների համար, մյուս կողմից նշանակման գործընթացում ներգրավված որակավորման հանձնաժողովի ձևավորման համար:

Համակարգում նշանակումների նկատմամբ հանրային վստահության բարձրացման եւ առավել անկախ ու արդյունավետ գործունեություն ապահովելու համար անհրաժեշտ է վերանայել որակավորման հանձնաժողովի կազմը, ձևավորման ընթացակարգն ու անդամներին ներկայացվող պահանջները:

Նախ, պետք է վերացվի գլխավոր դատախազին տրված անսահմանափակ լիազորություններն ու մենաշնորրը, ինչի համար պետք է ձևավորվի նաեւ որակավորման հանձնաժողովի անդամներին ընտրող մրցութային հանձնաժողով: Վերջինիս կազմում կլինեն՝

- Գլխավոր դատախազության երկուական ներկայացուցիչ
- 2 իրավաբան գիտնական
- 2 քաղհասարակության ներկայացուցիչ

Մրցութային հանձնաժողովի կողմից որակավորման հանձնաժողովի անդամների ընտրությունը պետք է անցկացվի հրապարակայնության, թափանցիկության ու օբյեկտիվության սկզբունքների հիման վրա՝ որպես հիմնական չափանիշ ընդունելով թեկնածուների մասնագիտական կարողություններն ու ունակությունները:

Մրցութային հանձնաժողովի կողմից ձևավորվող որակավորման հանձնաժողովը կազմված կլինի 9 անդամից՝

- չորս դատախազ

<sup>2</sup>Նույն տեղում

<sup>3</sup> [https://www.prosecutor.am/myfiles/files/%D5%80%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%202020/hraman%2042%20\(1\).pdf](https://www.prosecutor.am/myfiles/files/%D5%80%D6%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%202020/hraman%2042%20(1).pdf)



- ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտորը
- Երեք իրավաբան-գիտնական
- մեկ քաղաասարակության ներկայացուցիչ

Հանձնաժողովի բոլոր անդամները պարտադիր անցնում են բարեվարքության ստուգում:  
Հանձնաժողովի անդամներին ներկայացվող պահանջները հստակ ամրագրում են ստանում օրենսդրական մակարդակում:

### **Անհրաժեշտ փոփոխություններ**

#### **Հոդված 23. Գլխավոր դատախազին առընթեր էթիկայի և որակավորման հանձնաժողովները**

1. Գլխավոր դատախազին առընթեր գործում են էթիկայի և որակավորման հանձնաժողովներ:

2. Էթիկայի հանձնաժողովը բաղկացած է յոթ անդամից: Էթիկայի հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, երեք իրավաբան-գիտնական և գլխավոր դատախազի, գլխավոր դատախազի էթիկայի հանձնաժողովի անդամ չհանդիսացող տեղակալների, գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, Երևան քաղաքի դատախազի, մարզերի դատախազների, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների և կայազորների զինվորական դատախազների կողմից ձայների մեծամասնությամբ ընտրված երեք դատախազ: Էթիկայի հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:

3. Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործառույթներ (այսուհետ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ) իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ տասնմեկ անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում արդարադատության ակադեմիայի ռեկտորը, գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և երեք իրավաբան-գիտնական, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Փորձագետները պետք է ունենան ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների քննության առնվազն երեք տարվա փորձառություն:

**Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:**

4. Սույն հոդվածով սահմանված հանձնաժողովի անդամներն անկախ են: Նրանց գործունեության առնչությամբ որևէ միջամտություն արգելվում է:

5. Յուրաքանչյուր դատախազ կարող է լինել սույն հոդվածով սահմանված միայն մեկ հանձնաժողովի կազմում: Հանձնաժողովների անդամները նշանակվում են երեք տարի ժամկետով, բացառությամբ երկու փորձագետների, որոնք նշանակվում են մեկ տարի ժամկետով:



6. Հանձնաժողովներում նոր անդամների նշանակումները սույն հոդվածով սահմանված կարգով կատարվում են գործող անդամների լիազորությունները դադարելու օրվան հաջորդող օրը:

7. Սույն հոդվածով սահմանված հանձնաժողովների գործունեության, ինչպես նաև դատախազ անդամների ընտրության կարգը սահմանում է գլխավոր դատախազը:

**Ուժը կորցրած ճանաչել** 23-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հետևյալ կարգավորումը՝ *Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում արդարադատության ակադեմիայի ռեկտորը, գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և երեք իրավաբան-գիտնական, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը:*

**Ուժը կորցրած ճանաչել** 3-րդ կետով նախատեսված հետևյալ կարգավորումը՝ *Որակավորման հանձնաժողովը ղեկավարում է գլխավոր դատախազի տեղակալը:*

**Ուժը կորցրած ճանաչել** 5-րդ կետով սահմանված հետևյալ միտքը՝ *բացառությամբ երկու փորձագետների, որոնք նշանակվում են մեկ տարի ժամկետով:*

**Հոդվածի 3-րդ կետը սահմանել հետևյալ խմբագրությամբ՝**

3. Որակավորման հանձնաժողովը կազմված է ինն անդամից, իսկ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված գործառույթներ (այսուհետ՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ) իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ տասնմեկ անդամից: Փորձագետները պետք է ունենան ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների քննության առնվազն երեք տարվա փորձառություն:

3.1 Որակավորման հանձնաժողովի անդամներն ընտրվում են մրցութային կարգով՝ այդ նպատակով ձևավորված մրցութային հանձնաժողովի կողմից:

Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում ՀՀ գլխավոր դատախազության չորս ներկայացուցիչ, Արդարադատության ակադեմիայի ռեկտորը, երեք իրավաբան գիտնական եւ քաղհասարակության մեկ ներկայացուցիչ:

Որակավորման հանձնաժողովի բոլորը անդամները օրենքով սահմանված կարգով անցնում են բարեվարքության ստուգում: Որակավորման հանձնաժողովի դատախազ անդամները պետք է ունենան դատախազության համակարգում առնվազն տաս տարվա աշխատանքի փորձառություն, օժտված լինեն մասնագիտական բարձր որակներով ու կարողություններով:

Որակավորման հանձնաժողովի իրավաբան-գիտնական անդամ կարող է ընտրվել այն իրավաբան գիտնականը կամ այն հեղինակավոր իրավաբանը, որն ունի միայն Հայաստանի



Հանրապետության քաղաքացիություն, ընտրական իրավունք, օժտված է բարձր մասնագիտական որակներով և ունի մասնագիտական աշխատանքի առնվազն ութ տարվա փորձառություն:

Որակավորման հանձնաժողովի կազմում քաղաքացիական հասարակությունից անդամ կարող է ընտրվել ոլորտային գործունեություն ծավալող հասարակական կազմակերպության ներկայացուցիչ, ով ունի դատախազական ոլորտին առնչվող առնվազն հիգն տարվա մասնագիտական գործունեություն:

3.2 Որակավորման հանձնաժողովի անդամների ընտրության նպատակով ձևավորվում է մրցութային հանձնաժողով: Մրցութային հանձնաժողովի կազմում ներգրավվում են երկու դատախազ, երկու իրավաբան-գիտնական եւ քաղաքացիական հասարակության երկու ներկայացուցիչ:

**Նախատեսել հոդվածի 3.3 կետ՝ հետեւյալ բովանդակությամբ՝**

Որակավորման հանձնաժողովը իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի նախագահին ընտրվում է գաղտնի քվեարկությամբ՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Որակավորման հանձնաժողովի նախագահին ընտրվում է երկու տարի ժամկետով՝ առանց վերընտրման իրավունքի:

**Հոդվածի 7-րդ կետը սահմանել հետեւյալ կերպ՝**

Սույն հոդվածով սահմանված հանձնաժողովների գործունեության, ինչպես նաև անդամների ընտրության կարգը սահմանվում է օրենքով:

**Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմը հաստատելու մասին 26.04.2021թ-ի հրամանը:**